

Ֆրանսիական զինեւորանքի մէջ ֆարքից աւելի ընդունակներ եւ իւրաքանչիւր կան եւ որ Ալժիրիայի համար Ալքեր Գրեմիից աւելի յարմար կառավարիչ կարելի էր գտնել։ Բայց այն հարցը, թէ Ֆրանսիական նշանաւոր շահերը ի՞նչ են գտնուում այժմ միջակ ընդունակութիւնների տէր, թէպէտ և չափից դուրս պատուաւոր և բարեխիղճ մարդկերանց ձևաքին, բոլորովին այնպէս չէ վճռուում, ինչպէս մտածում են բոնապարտեանները և այլ միապետականները։ Այդ հարցը անվճիռ մնաց մինչև անգամ պատգամաւորների ժողովի վիճաբանութիւնների ժամանակ։

Ֆրանսիայի մէջ շատ լաւ հասկանում են այն իսկական պատճառները, որոնք ստիպում են կառավարութեանը ընտրել զինեւորակ ֆարքի նման պատերազմական միջոցներ և Ալքեր Գրեմիի նման նահանգապետներ։ Ֆրանսիական հանրապետութիւնը իր տաս տարեկան գոյութեան ժամանակ, խաղաղութիւն պահպանելով, չէր կարողացաւ ստեղծել հանրապետական զինեւորակներ։ Մի և նոյն ժամանակ անկարելի է իշխանութիւնը տալ մարշալ Կոնրոբերի և Մակ-Մահոնի նման մարդկերանց, որոնք Ֆրանսիական պետական այժմեան կազմակերպութեան բացարձակ թշնամիներ են։ Ֆրանսիայի մէջ այժմ շատ քիչ հանրապետական զինեւորակներ կան, որովհետև նրանց պէտք էր ընտրել այն երիտասարդ օֆիցերներից, որոնք գերազանցակցան Ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ։ Գնեւորակ ֆարք սրանց թիւին է և զարմանալի չէ, որ նա վարում է պատերազմական միջոցների նշանաւոր պաշտօնը։ Մինչև հունիսի արշաւանքի ըսկանը նա համապատասխանում էր իր կոչմանը, բայց Ալժիրիայի մէջ պատահած անաշտութիւնները ցոյց տուին Ֆրանսիայի պատերազմական վարչութեան պակասութիւնները։

Ի՞նչ է պատճառը, որ Ֆրանսիական զինեւորակների մէջ շատ քիչ հանրապետականներ կան, որոնցից կառավարութիւնը առանց երկիւղ կրկու կարողանար ազատ ընտրութիւն անել։ Ֆրանսիական զինեւորակները սերը դէպի միապետական ըսկանցիւնները նրանով է մեկնում, որ հանրապետութիւնը փառաւոր ընծաներ և վարձատրութիւններ չէ տալիս, որոնք զարգացնում են զինեւորակների փառասիրութիւնը։

Հանրապետութիւնը առհասարակ մի խաղաղասէր կառավարութիւն է։ Նա չէ բացանում պատերազմական մարդկերանց առաջ մեծ ասպարէզ, չէ տալիս բարձր տիտղոսներ և կալուածական վարձատրութիւններ։ Այդ է պատճառը, որ Ֆրանսիական զօրքերի կառավարութիւնը յանձնված է համեստ գնեւորակ ֆարքին, իսկ Ալժիրիայի գլխաւորահանգապետի դժուար պարտականութիւնները կատարում է կաթինեռական դործիչ Ալքեր Գրեմի։ Հանրապետական պատերազմական դործիչների նոր սերունդը դեռ չէ կարողացել փոխարինել պատերազմական այն մարդկերանց, որոնք Ֆրանսիական հանրապետութիւնը ժառանգել է միապետական կառավարութիւններից։

ԱՄՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱ

Յուլիս ամիսը անմոռաց կը մնայ աւստրիական խմբագրութիւնների համար, որովհետև այդ ամսվայ ընթացքում չափազանց շատ լրագիրներ արգելիցան և կալանաւորվեցան։ Պրագայի մէջ կատարված անկարգութիւններից յետոյ երկու շաբաթվայ

ընթացքում ոչ մի օր չէ պատահել, որ 6—8 լրագիրներ չը կալանաւորվէին։ Չեխիայի և Մորաւիայի մէջ մօտ 40 լրագիրներ են կալանաւորված։ Այսպիսի հալածանք դէպի մամուլը երբեք պատահած չէ։ Կառավարութիւնը, ինչպէս երեւում է, բաժանում է կիսապաշտօնական լրագիրների այն կարծիքը, որ Պրագայի մէջ պատահած վերջին անկարգութիւնների պատճառները լրագրական ցոյցերն էին և այդ հիման վրա չէին վճռել վերջ դնել այդ ցոյցերին, խնայելով փառվելով խմբագրութիւնների հետ։

Ճշմարիտ է, Չեխիայի քաղաքական կուսակցութիւնները օգուտ էին քաղում լրագրական խօսքից ազգային կրքերը զարգացնելու համար, բայց բացառապէս այդպիսի վարմունքը անկարող էր միակ պատճառ լինել Պրագայի մէջ կատարված փողոցային անկարգութիւնների։

Պրագայի անկարգութիւնների ժամանակ մօտ 70 գերմանացի պատգամաւորներ հաւաքվեցին և մի ազգաբնակչութիւն կազմեցին, որ ուղղված էր Աւստրիայի գերմանական ազգաբնակչութեանը։ Այդ ազգաբնակչութիւնը խտութեամբ յարձակվում է կառավարչական քաղաքականութեան վրա և հրաւիրում է ազգաբնակչութեանը պատասխան տալու օմիտներին ընդդիմադրելու համար։ Նոյն բովանդակութեան ազգաբնակչութիւն կազմեցին չեխական պատգամաւորները։ Կառավարութիւնը ոչ մի խտութիւն գործ չը դրեց դրանց վերաբերութեամբ և պատժեց միայն այն լրագիրներին, որոնք տպեցին այդ ազգաբնակչութիւնները։ Վիեննայի քաղաքային խորհուրդը մի վճիռ կայացրեց, որ պախարակում է կառավարութեան գործողութիւնները Պրագայի անկարգութիւնների ժամանակ։ Խորհուրդը ոչինչ պատիժ չը կրեց, այլ պատժիցան այն լրագիրները, որոնք տպեցին այդ վճիռը։

Չեխական նոր փոխարքայ Շարաուս ընդունեց տեղական մասնաժողովների անդամներին, որոնց ճառերին հետեւալ պատասխանը տուեց։ «Իբրեւ աւստրիական զինեւորակ ես պարտաւոր եմ առհասարակ ոչ մի քաղաքականութեանը չը մասնակցել և մանաւանդ կուսակցական քաղաքականութեանը։ Ես միատեսակ բարի դիտաւորութիւններ ունեմ թէ չեխերի և թէ գերմանացիների վերաբերութեամբ։ Այժմ մենք օրէնքներ իմ միակ առաջնորդներ կը լինեն ազգային սկզբունքները դառնելու ժամանակ, որոնց ես յարգում եմ։ Իմ գործունէութեան գլխաւոր նպատակն այն է, որ ազգութիւնները եղբայրաբար համոզայն ապրեն։ Կուսակցութիւնների թշնամական գործողութիւններին ես խնայելով կը վերաբերվեմ, բայց միտեւսակ իրաւացի կը լինեմ երկու կողմերի հետ»։

ԱՆԳԱՐԻԱ

Կալուածական օրէնքի քննութիւնը երեւի շուտով կը վերջանայ։ Անգլիական կուսակցութիւնը հաւատացած է, որ այդ օրէնքը կընդունվի և լորդերի ժողովից և այդ պատճառով պատրաստութիւններ է տեսնում օրէնքը գործադրելու համար։ Այժմ նա զբաղված է այն երեք հաւատարմատարների ընտրութեամբ, որոնք պէտք է մասնակցեն կալուածական դատարանին, որ Իրլանդիայի մէջ վերանորոգութիւններ մտցնելու համար գլխաւոր գործիչ կը լինի։ Շուտով այդ երեք անդամներ

ընտրվելու կը յայտնվեն պարլամենտին։ „Times“ լրագիրն ընդհանրապէս հաւորդում է, որ Էյլեր-Լուան հասել է չայգերաբար։ Աֆգանական էմիրի զօրքերը ուղեւորվում են դէպի Կանդահար և Գիրշիկ։ Յայտնի չէ էմիրը հեռացել է Կարուլից, թէ դեռ ևս այնտեղ է։ Կարծում են, որ այժմ Հերատի մէջ բոլորովին զօրքեր չը կան և ի՞նչ էմիրի զօրքերը այժմ յարձակվին Հերատի վրա, Էյլեր-Լուան շատ կը դժուարանայ։ Գժուար է ներթափել, որ Արդուսթանի նման մի փորձված զօրապետ օգուտ չը քաղէ այդ հանգամանքից։

Անգլիական նախկին ղեկավար Կ. Պոլսի մէջ, Գոչն մի հաշիւ ներկայացրեց իր ընտրողներին իր գործունէութեան մասին։ Նրա ռեկոնֆերանսը իմացան, որ բաւական դժուար և ծանր բանակցութիւնների ժամանակ Բ. Կրան հետ, մեծ պետութիւնների ներկայացուցիչները համաձայնութիւն պահպանեցին և միաբանութեամբ ձգտում էին պահպանել խաղաղութիւնը Արեւելքի մէջ։ Այդ ճառի մէջ նշանաւորն այն էր, որ Գոչն չափազանց գովում էր Աւստրիայի գործունէութիւնը։ Կեսպանը չէ նկատել, որ Աւստրիան նուաճողական նպատակներ ունենար Քիւրքիայի վերաբերութեամբ։ Անգլիան աշխատել է Գերմանիայի հետ համաձայնութեամբ գործել այդ պետութիւնների մէջ որոշված նախադէրի համեմատ։ Բանակցութիւնների ղեկավարութիւնը յանձն է առել իշխան Բիւմարի Անգլիայի առաջնորդութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրների մէջ կարգում ենք, որ Ֆրանց-Յոսեփ կայսրը կը տեսնվի Վիեննայի կայսրի հետ Գալտէյնում, յուլիսի վերջերին, ինչպէս որ պաշտօնապէս կարգադրված է։ Երկու պետութիւնների միջոցաւ օրգանները հաստատում են, որ այդ տեսութիւնը միայն քաղաքավարութեան և անձնական բարեկամութեան հետեւն է, առանց որ և է քաղաքական շարժառիթներով։ Աւստրիայի և Գերմանիայի բարեկամութիւնը արդէն կատարված իրողութիւն է, և այդ բարեկամական կապերը չեն կարող սրանց ամուր կապված լինել։ Այնու ամենայնիւ չը կայ ծուխ առանց կրակի, և շատերը հաւատացած են, որ Գալտէյնում կը կատարվեն բարեկամական բանակցութիւններ քաղաքական նշանաւոր հարցերի վերաբերութեամբ, մանաւանդ որ բարձր շայնթիւն և իշխան Բիւմարի դիտաւորութիւն ունէին տեսակցել միմեանց հետ Աւստրո-Ունգարիայի արեւելեան պրօքրատայի մի քանի կասկածելի կետերի մասին անձնապէս բացատրութիւններ տալու համար։

—Փարիզից լրագիրներին հաղորդում են, որ Ֆրանսիական կառավարութիւնը վճռեց արտաքին Ֆրանսիայից մի քանի կաթիլտներին, որոնք նոր ապստամբութիւն էին պատրաստում Ալաւիայի մէջ։

—«Temps» լրագիրը հաղորդում է, որ Փարիզի քաղաքային խորհրդում հակասեմիտական առաջին փորձն արվեցաւ։ Խորհրդի պահպանողական անդամներից մէկը մասնաւոր զարգացում էր քաղաքային ուսումնարաններում։ Գալտէյնցաւ, որ Բօտշիլդէրի տունը այս տարի իր որդեանցներում և ուսումնարաններում նախկին տարիներից աւելի շատ երեխաներ է ընդունում, և այդպիսով օգնում է և բազմաթիւ ծնողներին։ Այս «գաղտնիք» բացվեցաւ և առիթ տուեց վերոյիշեալ պահպանողական անդամին մերկայանելու հրէական վտանգաւոր պրօպագանդան։ Այդ մերկայացումը այնու ամենայնիւ, առանց հետեւանքի մնաց։

—Կ. Պոլսից գրում են լրագիրներին, որ Սուլթանը յետաձգեց պետական յանցաւորների դատավճիռը մինչև բայրամի տօնի վերջը։ Այդ ժամանակամիջոցում կը հրատարակվի իշխան Իւսուֆ-Իպէդինի մէկ գրութիւն, որից կերեայ թէ նախկին սուլթան Մուրադը անհաշտ ատելութեամբ

թեամբ հալածում էր Արդու-Աղիզի ընտանիքը։ Զմուռնիայում բանտարկված Մեհմեդ-Բուշտի-փաշայի դուռնիքը այն աստիճան վառացաւ, որ շուտով սպանելի է նրա մահը։

—«Daily News» լրագիրն հաղորդում են, որ Միդհատ-փաշա վճռեց անձնասպանութիւն գործել Նա փորձեց իր երակները մկրատով կտրել, ապացուցելու համար այդպիսի ինքնասպանութեան կարելիութիւնը։ Նրան արգելեցին, և սուլթանը, կանչելով նրան իր մօտ, իր ցաւակցութիւնը յայտնեց նրա դիտաւորութեան մասին։ Միդհատը պատասխանեց, որ իր կեանքը անօգուտ է դարձել և խնդրում է միայն մէկ ողորմութիւն՝ կախելու տեղ՝ հրացանազարկ անել նրան։

—Փարիզից հեռագրում են, որ պատգամաւորները ժողովը ընդունեց պարտաւոր ուսման օրինադրել, մերժելով սենատի արած փոփոխութիւնները։

—Կ. Պոլսից «Голосъ» լրագիրն հեռագրում են, յուլիսի 24-ին, որ նախկին սուլթան Աբդուլ-Ազիզի սպանութեան մէջ մասնակցող բոլոր անձանց մահուան պատիժը փոխարինված է բանտարկութեամբ։

—Հոսովից «Daily News» լրագիրն, յուլիսի 21-ից հեռագրում են հետեւեալը։ «Երէի, երեկոյեան—Մարգարիտա Թագուհու անուանակոչութեան օրը—ի պատիւ նորա ցոյցեր կեղան։ Ահապէս բազմութիւնը, առջինից երեք գոյնի դրօշակը տանելով և օդը արմկելով հաւատարմ հպատակութեան բացախանքութիւններով, կանդնում էր կղերական արիւնտոկրատիայի աների առաջ լիտուրգիա կղերականները աղաղակեալով, և յետոյ երեկոյեան մօտ տասը ժամին ամբողջ «Piazza Colonna»-ից շարժեց դէպի Կապիտոլ, ուր սինիոր Արմեյիի, որը քաղաքապետի պաշտօն է կատարում, կարգաց թագուհուց տոնացած հեռագիրը որպէս պատասխան քաղաքային խորհրդի կողմից նրան մատուցած նորահաւորութեան Զը նախկին որ Արմեյիի խառնեց ամբողջին՝ հակակղերական ցոյցերը վերջացնել, որ յուլիսի 12-ից այստեղ ամեն երեկոյ կրկնվում են, ամբողջ աղաղակեց. «Թող կորչեն կղերականները»։ Գետ գալու ժամանակ գերմանական ղեկավարաւոր անալ անցնելով, որ լուսաւորված էր, ամբողջ աղաղակեց. «Կեցցեն մեր բարեկամները»։

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լճից մոտ, յուլիսի 19-ի գիշերը, մեռաւ Ուեստմինստերեան Միաբանութեան յայտնի դէկան Ստէնլի։

Տոնիսի լիազօր Մուստաֆա-Բէկ-Իզմայիլ, մէկ երեկոյից նախկին ժամանակ փախկում, Բէյ աբդուլային ընծայեց 500 ֆրանկ եկեղեցու պէտքերի համար։ Արեւմտ չը կարողացաւ իր զարմանքը չը յայտնել, յօգուտ քրիստոնէական եկեղեցու այդպիսի զոհարարութեան առիթով մէկ մասնաւորականի կողմից։ Մուստաֆան փիլիսոփայաբար նկատեց արեւոյային. «Իրոք կրօնները զանազան ճանապարհներով դիմում են մէկ նպատակի,—յարգանք սերմանելու. դէպի բարձրագոյն էակը և մարդկային ցեղի լաւացնելուն։ Միւս աշխարհում մենք բոլորս մէկ ենք»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 21 յուլիսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին, երէկ, յուլիսի 20-ին աշոտութեամբ բարեհաճեցին Նիժնի-Նովոգորոդ հասնել և այցելեցին նոր մայր-եկեղեցին տօնավաճառի վրա։ Մայր-եկեղեցին երէկ օծվեցաւ։ Կայսրի և Կայսրուհու ճանապարհորդութեան ժամանակ ժողովրդի հիացումը անկարագրելի էր։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ երէկ զինեւորակ Սիբիրից հասաւ Ս. Պետերբուրգ։

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 21 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 1/2 Կ., երկրորդ 94 ռ. 37 Կ., երրորդ 94 ռ. 75 1/2 Կ., չորրորդ 94 ռ. 12 1/2 Կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսերը արժէ 226 ռ., երկրորդ 224 ռ. 50 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 91 ռ. 87 Կ., երկրորդ 92 ռ., երրորդ 91 ռ. 75 Կ., սակի 7 ռ. 78 Կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 25,75 պէնս, ռուսաց 100 ռ. շաբաթը փրա արժէ 219 մարկ, 87 պֆ., Փարիզի վրա արժէ 270 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЗРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ

Цѣна 25 коп.

144 Արժույտը գաղտնի 144
ամենախոշոր պահանջարկի
և հայերենների

Մինչև առաջիկայ սեպտեմբեր լոյս կը տեսնին Փիզիկական, Ժողովրդական և քաղաքական ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ հայ աղայոց և օլորդական ուսումնարանների համար: Ցանկացողները կարող են դիմել ուղղակի աշխատասիրողին հետևեալ հասցեով:

Тифлисъ. Армянская Духовная Семинарія Нерсесьянъ. Учителью А. Грегъ-Акопянцъ.

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմոնեանց լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Ներսիսի «Տնային բժշկական մարմնամարզութեան» գրքի հայերէն թարգմանութիւնը 45 պատկերով որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմաթիւ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է 40 կոպ. ծախվում է «Կենտրոնական և Կովկասեան գրա-վաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանանցի մօտ.» Тройцкій пер. типография Вартанянца, въ Тифлисъ.

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԻԲՈՐ ՎԱՐՁՆԵԼՆԱՆ

գինն է 70 կոպէկ

Ուսումնարանները և շատ օրինակ գնողները 20% զիջում են ստանում:

Ցանկացողները կարող են դիմել՝ կամ ուղղակի հեղինակին, «Тифлисъ, Григоріо Соломоновичу Вардзелянъ, Армянская Семинарія, կամ կենտրոնական գրա-վաճառանոց, ուր պահեստն է այդ գրքի:

Открыта полугодовая подписка

НА

ЕЖЕНЕДЕЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“

(издаваемый въ г. Тифлисъ)

Съ 1 Іюля 1881 года по 1 Января 1882 года.

Цѣна за полъ года 6 руб.

Кромѣ того можно подписаться на 3 мѣс.—3 руб. 20 коп., на 1 мѣс.—1 руб. 20 коп. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года.

Разсрочка въ взносъ денегъ допускается по соглашенію съ администраціею жур-нала.

Подписка принимается исключительно въ администраціи журнала, въ г. Тифлисъ, близъ Головинскаго пр., по Безыменному пер. въ домѣ Тамашева.

Издатель А. С. Френкель.

Редакторъ А. В. Степановъ

«Ի Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՅԻԻ

Ցպիված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 երկնից: Թիֆլիսում ծախվում է «Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական գրա-վաճառանոցում», «Կովկասեան գրա-վաճառանոցում» պ. Զաքարիա Գրիգորիանցի մօտ, և պ. պ. Շահինյանցի, Բոզար-Ջանցի, Հովսեփյանցի ծխախոտի մագազիններում:

Գինն է 1 ռուբլ 20 կոպ.

ԱՅՍ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆԻՍԻ ՍԿՋԲԻՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԸ

Որ առաջ գտնվում էր Արժույտը գաղտնի, անցաւ Միւրի մանեանի խանութները, Գօլօվինսկի Պրոսպեկտի վրա, Սուգեթի Պալատի տակը № № 3, 4 (երբեմն Ջանջուզականների խանութը):—Այս 1881 թուականից գրախանութին կից բացվում են:

Ա. Մի առանձին բաժին ուսումնարական, դիւանական, գրադիտական պիտույքների, ուր վաճառվում են՝ թղթեր թանաքներ, մատիտներ, տետրակներ, քարտատետրեր, գրառարկաներ, փոստի ծրարներ, հայերէն և ֆրանսերէն մանրագրերով, կարկններ, նկարչութեան փրաքերով պիտույքներ և այլն և այլն...

Բ. Թիֆլիսում արդէն յայտնի «Մանկական դաստիարակութիւն» (Дѣтское Воспитаніе) անունով պ. Արքեմանի Ֆիրման և անցաւ Կենտրոնական Գրա-վաճառանոցի ձեռքը, ուր վաճառվում են ամենատեսակ մանկավարժական խաղալիքներ ամենայն հասակի մանկանց համար:

Ընդունվում են պատուէրներ նաեւ արտաքին քաղաքների ուսումնարանական փարչութիւններից ու մասնաւոր անձիքներից: Գները համեմատաբար չափաւոր են: Դրամաւոր պատուէրները կատարվում են անյապաղ:

Արտաքին քաղաքների օրիորդական ուսումնարանների փարչութիւնների գործը թեթեւեղեղ համար Կենտրոնական Գրա-վաճառանոցը յանձնառու կը լինի կատարել և այնպիսի պատուէրներ, որոնք իրան գործունէութեան շրջանից դուրս են, այն ջանքով որ ծին վերաբերեալ ամենատեսակ պիտույքներ գնել և ուղարկել, բայց միայն ուսումնարանների համար, որոնք իրանից են գրքեր և այլ ուսումնարանական իրեր գնում: Անփող պատուէրներն անկատար են մնում:

Կենտրոնական Գրա-վաճառանոցում ի միջի այլոց վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները:

Բաժնիքի. Խնթը	1 ռ. 20 կ.
— Դաւիթ Բէկ	1 ռ. 50 կ.
Յովհաննիսեան. Հայը և Հայաստանը օտարների աչքում	2 ռ. 30 կ.
Շահադիդեան. Հրապարակախօս ձայն	2 ռ. — կ.
— Նոյն փառակազմ	3 ռ. — կ.
Այվազեան Գ. Արք. Պատմութիւն Խալիպ. ուսումնարանի	2 ռ. 40 կ.
Աթանասեան. Երեւանի նահանգի բուսականութիւնը	2 ռ. 50 կ.
Բուսաբանութիւն համառօտ	2 ռ. 30 կ.
Անփող պահանջներն անկատար են մնում:	

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթուղներ և բազկաթուղներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատոլիկաց փողոցի անկիւնում Մի-ԿԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼԱՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրացիք կարող են դիմել այս հասցեով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Николосову.

41—150

Արդէն ուղարկեցաւ իւր բաժանորդներին ՐԱՅՅԻԻ «ԻԵՆԹԸ» անու-նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՉ պ. Գրիգոր Բէշանեանցին:

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АП-РЪСЯНЦУ.

ՄԾԱԿՆԵՐ կոտորելու փոշի:
Ծախվում է ՇԱՏՈՒՐՈՎԻ լաւ-պի մագազինում:

Утеряно 18-го іюля, проходя по Кочубеевской улицѣ, по Александровскомъ саду и по Головинскому Проспекту утвержденное подлинное ДУХОВНОЕ ЗАВѢЩАНІЕ, принадлежащее вдовѣ подполковника Ольгѣ Ивановнѣ Шпейеръ. Просятъ доставить та-ковое въ Куки на Кочубеевскую у-лицу, домъ Эссадзе, за приличное вознагражденіе. 1—3

Կորցրած է 18-ին յուլիսի անցնելով Կո-չուբեևսկայա փողոցով, Ալեքսանդրեան այգիով և Գօլօվինսկի պրոսպեկտով վաւե-րացրած իսկական ԿՏԱԿ, որ պատկանում է փոխ-գնդապետի այրի Օլգա Իվանովնա Շպե-յերին: Խնդրում են դանդղին հասցնել այդ կտակը Կուկի, Կոչուբեևսկայա փողոց, տուն Էսսաձէ, վայելուչ վարձատրութեամբ: 1—3